

<p>Համարը թիվ 1 Տիպը Պաշտոնական պարզաբանում Մկզբնադրյուրը ՀՀԳՏ 2012.09.03/23(436) Ընդունող մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողով Ստորագրող մարմինը Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովի նախագահ</p>	<p>Տեսակը Մայր Կարգավիճակը Գործում է Ընդունման վայրը Երևան Ընդունման ամսաթիվը 20.08.2012 Ստորագրման ամսաթիվը 20.08.2012</p>
<p>Վավերացնող մարմինը Ուժի մեջ մտնելու ամսաթիվը 20.08.2012</p>	<p>Վավերացման ամսաթիվը Ուժը կորցնելու ամսաթիվը</p>

⊕ Կապեր այլ փաստաթղթերի հետ

**ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄԸ
 ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ /ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ/ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԱՆՁԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
 ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

ՀԵՌՈՒՍՏԱՏԵՍՈՒԹՅԱՆ ԵՎ ՌԱԴԻՈՅԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 օգոստոսի 2012 թ. թիվ 1
 ք. Երևան

Պ Ա Շ Տ Ո Ն Ա Կ Ա Ն Պ Ա Ր Զ Ա Բ Ա Ն ՈՒ Մ

**ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ /ՎԵՐԱՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ/ ԿՈՂՄԻՑ ԱՅԼ ԱՆՁԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
 ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ՑԱՆՑԻ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՕԳՏԱԳՈՐԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 87-րդ հոդվածի 2-րդ մասի «գ» կետով՝ Հեռուստատեսության և ռադիոյի ազգային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) պարզաբանում է.

«Հեռուստատեսության և ռադիոյի մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի պարզաբանում տրված է Հանձնաժողովի 05.11.2009թ. թիվ 12 պաշտոնական պարզաբանմամբ:

Իսկ Հանձնաժողովի կողմից լիցենզավորված հեռուստառադիոընկերության կողմից այլ անձի (այսուհետ՝ Օպերատոր) հանրային էլեկտրոնային հաղորդակցության ցանցի հնարավորությունների օգտագործման վերաբերյալ հայտնում ենք հետևյալը.

Օպերատորի կողմից հեռուստառադիոընկերության լիցենզիա ունեցող անձին իր գործունեության իրականացման համար Օպերատորի հանրային էլեկտրոնային ցանցի միջոցով թողունակության տրամադրման, հեռուստառադիոընկերության փոխարեն բաժանորդների հետ պայմանագրերի կնքման, համապատասխան բաժանորդավճարների գանձման գործընթացները ՀՀ օրենսդրությամբ Հանձնաժողովի կողմից լիցենզավորման

Էնթակա չեն:

**Հեռուստատեսության և ռադիոյի
ազգային հանձնաժողովի նախագահ**

Գ. Ամալյան